

ԱԶԳԱՅԻՆՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆԸ ՏԵՐՄԻՆԻ ՈՒ
ՏԵՐՄՈՒՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Երևանի պետական համալսարանի ճայոց լեզվի ամբիոնի վարիչ,
լուսատիրական գիտությունների թեկնածու

Ռ. Իշխանյանի «Հայերենի տերմինաշինության հարցերը» հոդվածը («Լրա-
րիք», 1969 թ., № 7) սկսվում է հայ լեզվաբանական մեծածավալ գրականու-
թյան մեջ տերմինաբանական հարցերի գիտական ուսումնասիրության անբա-
վարար վիճակի փաստի արձանագրումով: Սա մի միտք է, որի ճշմարտացիու-
թյան գեմ դժվար է առարկել: Սակայն այդ պնդումը, այնուամենայնիվ, որոշ
ճշգրտման կարիք ունի: Այսօր մենք շատ էլ հիմք չունենք դժգոհելու հայերենի
տերմինաշինության ու տերմինագործածման սկզբունքների տեսական ան-
մշակվածությունից. վատր արդեն մշակված և ձևավորված սկզբունքների ան-
բավարար գործադրումն է գիտության ու տեխնիկայի լեզվում:

Տերմինաշինության սկզբունքների ստեղծումը, սկզբունքներ, որոնք որոշ
մասով կարող են նաև ընդհանուր լինել տարբեր լեզուների համար, դեռևս
տերմինների ստեղծում չէ:

Մենք ավելի շատ խոսում ենք հայերեն տերմիններ ստեղծելու մասին,
քան դրանք ստեղծում ենք: Ուստի պատահական չէ, որ Ռ. Իշխանյանի վերո-
հիշյալ հոդվածի առթիվ «Լրաբերի» (№ 9) խմբագրությանը հասցեագրած իր
նամակում Ա. Ոսկանյանը, մի տեսակ, կշտամբում է մեր բնական ու հասարա-
կական տարրեր գիտությունների անցյալի ներկայացուցիչներին հայերենի գի-
տական տերմինաբանության հարցերի քննարկմանը շատ քիչ մասնակցելու
համար և ապա, կարծես, նրանց արդարացնելու համար ավելացնում է. «Հաս-
կանալի պատճառներով առաջին հերթին մտահոգված լինելով իրենց կոնկրետ
գիտությունների առջև կանգնած խնդիրների լուծմամբ, նրանք դժբախտաբար,
քիչ են մտահոգվել հայերենի գիտական տերմինաբանության հարցերով»¹:

Ինչպե՞ս թե՛ «քիչ են մտահոգվել հայերենի գիտական տերմինաբանության
հարցերով» իսկ ովքե՞ր են ստեղծել մեր փիլիսոփայական, տրամաբանական,
քերականական, մաթեմատիկական, կենսաբանական ու գիտության այլ ճյու-
ղերի հազարավոր տերմինները: Մի՞թե տերմինաբանական հարցերով մտա-
հոգվելը միայն տերմինաբանության հարցերի քննարկմանը շատ մասնակցելն
է: Ապա ինչպե՞ս են նրանք կարողացել իրենց գիտության խնդիրները լուծել,
առանց նրանց տերմինաբանության խնդիրները լուծելու:

«Տերմինաշինության, մասնավորապես այլ լեզուներից եկող տերմինների
թարգմանել-շթարգմանելու հարցը» մի կողմից համարելով Քբարդ ու նուրբ

¹ «Լրաբեր», 1969, № 9, էջ 103:

հարց», մյուս կողմից՝ ընտրելով «ոսկե միջինը», այսինքն՝ «որտեղ հարկ է՝ վերցնելով այլալեզու գիտական տերմինը, իսկ որտեղ պետք չէ, մերժելով այն»՝ տերմինաբանության շուրջը ծավալվող բանավեճերի մասնակիցներից ոմանք դրանով հայերենի գիտական տերմինաշինության հարցը տեսականորեն համարում են լուծված: Բայց ինչ արժե այս տեսությունը, երբ այլալեզու տերմինը նույնությամբ վերցնելու կամ մերժելու (այսինքն՝ թարգմանելու) հարցի լուծումը պայմանավորված է տերմինը գործածող մասնագետի հայերենի և օտար լեզուների իմացության, նրա տերմին ստեղծելու կարողության, բառագործածության նրա ճաշակի ու հակումների և այս կարգի բազմաթիվ սուբյեկտիվ գործոններով:

Էլ ինչու՞ էր նրբանկատ Թումանյանի իր ժամանակին այս նույն վեճերի առթիվ գրում. «Եվ էսպիսով լեզվի հաջող փոխառությունն ու ձիշտ թարգմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառնում, բայց, դժբախտաբար, լեզվի վրա անշնորհք մարդիկ շատ են ազդում, և հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց միայն մնում է խոսելիս թե գրելիս, փոխ առնելիս թե թարգմանելիս զգույշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհ»²:

Եթե ամեն մի տերմինի ստեղծումը «մի մեծ ստեղծագործություն է», իսկ այդ իրոք այդպես է, ապա գործնական ի՞նչ արժեք ունեն հայերենի տերմինաշինության մեջ օտար տերմինների գործածության վերաբերյալ եղած երկու ծայրահեղությունների և նրանցից խուսափելու ու ինչ-որ միջին ուղի գտնելու՝ տարիներ շարունակ տարվող խոսակցությունները:

Ինչպես մյուս ազգերի լեզուների, այնպես էլ հայերենի համար կան տերմինաշինական ավելի կայուն ու օգտակար սկզբունքներ: Այդ սկզբունքները վաղուց մշակված ու շարադրված են ՀՄՍՀ Մինիստրների սովետին կից տերմինաբանական կոմիտեի «Հայոց լեզվի նորմավորման ընդհանուր սկզբունքները» որոշման մեջ:

Ըստ այդ նորմավորող սկզբունքների ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման աղբյուրներն են՝ ժամանակակից հայերենի իր բառակազմական հարուստ միջոցներով, ապա գրաբարը, բարբառները և արևմտահայերենը, որպես օժանդակ աղբյուրներ:

Հայերենը հարստանում է նաև օտար լեզուներից և ռուսերենից անցած փոխառություններով: Տերմինի փոխառությունը կատարվում է միայն այն ժամանակ, երբ հայերենի բառակազմական միջոցներն ու բառապաշարի հարստացման բոլոր աղբյուրները օգտագործված են, բայց առանց իմաստի ազավաղման այդ տերմինի հաջող թարգմանությունը հնարավոր չէ:

Փոխառյալ օտար տերմինը, որպես կանոն, ենթարկվում է հայերենի հնչյունական ու բառակազմական օրինաչափություններին՝ թեև հայերենը պիտի ձգտի հնարավորին չափ պահպանել տերմինի մայրենի՝ փոխառու լեզվում ունեցած, արտասանությունը³:

Տերմինաբանական կոմիտեի վաղուց ի վեր սահմանած այս սկզբունքները համապատասխան օրինակներով շարադրելուց հետո, Ռ. Իշխանյանը չի

² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, 1951, հ. 4, էջ 375:

³ Տե՛ս «Տերմինաբանական ուղեցույց», 1964, էջ 9—11:

րացառում վերցված տերմինի «հայերեն թարգմանությունը ապագայում»։ Սա նույնպես հայերենի տերմինաբանության փորձից արված ճիշտ եղրակացություն է։ Կյանքի հրամայական պահանջով շտապ գործածության անցած օտար տերմինները հետագայում կարող են թարգմանվել։ դա շատ բնական է, և հայոց լեզուն տալիս է այդ բանի հարյուրավոր օրինակներ։ Մի քանի տասնամյակ շարունակ բոլորիս կողմից գործածվող մաբկա, վիտրինա, կոմպլեքս, կուրյուս, գելյա, շտանգա, շանգիսա և այլ բնույթի տասնյակ բառեր ու տերմիններ միայն վերջերս դարձան մակնիշ, ցուցափեղկ, ճամպիր, մասնաշենք, արտադրամաս, ծանրաձող, ծանրոդ և այլն։

Հունարենից անցած ստադիոն բառը մոտ 1600 տարի գործածվելուց հետո իր տեղը դիջում է մաբգադաշտին։

Լեզվական այս բնականոն երևույթների դեմ սուր ու թրով կռվել չի կարելի։ ուստի իդուր Լ. Ա. Ոսկանյանը իր երեք էջանոց նամակ-հոդվածում տերմինաշինության այս բանավեճի առիթով պատշաճ համարել Լ. Իշխանյանի հասցեին գործածել «ոչ գիտական տեսակետները անցկացնելու համար», «ճշգրիտ ապացուցել» և այլ արտահայտություններ։

Իր վերոհիշյալ հոդվածում Լ. Իշխանյանը, օտար-բառերի ու տերմինների թարգմանության ու փոխառման մասին տերմինաբանական կոմիտեի հաստատած սկզբունքները ներկայացնելիս, չդիտես, թե ինչու ոչ միայն տերմինաբանական կոմիտեի անունը չի հիշատակում, այլև այդ դատողություններից առաջ դնում է «մեր պատկերացմամբ» բառակապակցությունը։

Այդ «մեր պատկերացմամբ»-ն էլ իրավունք է տվել Ա. Ոսկանյանին տերմինաբանական կոմիտեի կողմից սահմանված՝ օտար բառերի ու տերմինների թարգմանության ու փոխառման սկզբունքները վերագրել Լ. Իշխանյանին և խստագույնս մերժել՝ դրանք հայտարարելով «ոչ գիտական», «հայերենը աշխարհից կտրված, իր պատյանում ամփոփված մի լեզու» դարձնող սկզբունքներ։ Ա. Ոսկանյանը փորձում է ընթերցողին համոզել, թե «մեր շատ անվանի լեզվաբաններից մեկի խոսքերով ասած, այդպիսի մոտեցումը «կարող է կատաստրոֆիկ ազդեցություն ունենալ հայ տերմինաշինության վրա»։ Բայց մի՞թե սխալված կլինենք, եթե կատաստրոֆայի ու կատաստրոֆիկ պես անհարկի գործածվող բառերի փոխարեն գործածենք հայերեն կործանումն ու կործանաբեր, աղետն ու աղետալիք, իսկ չունենալու դեպքում դրանց փոխարեն ստեղծենք նոր բառեր։

Մի՞թե հայերենի տերմինաշինությանը աղետ է բերում այն պահանջը, թե տերմինը թարգմանելիս պետք է գործադրել մեր լեզվի բառապաշարի հարսնացման բոլոր միջոցներն ու աղբյուրները։ Որտե՞ղ և ո՞վ է կոչ արել օտար բառերի ու տերմինների անխտիր թարգմանություն։ Լեզուների տերմինաշինության սկզբունքներին ու իրական վիճակին քիչ թե շատ ծանոթ մարդը ինչպե՞ս կարող է օտար տերմինների անխտիր թարգմանության կոչ անել կամ այդպիսի տեսություն քարոզել, երբ ամենքը գիտեն՝

ա) որ բոլոր այն հատուկ անունները, որոնք արդեն կորցրել են իրենց ստուգաբանական իմաստը, անթարգմանելի են։

բ) որ աշխարհով մեկ օրավուր աճող արտադրանքի հաղարավոր տեսակներ պայմանականորեն անվանվում են այդ կարգի հատուկ անուններով և դարձյալ անթարգմանելի են (թարգմանիր որևէ լեզվով «նաիրիտն» ու երևանիտը կամ «Արենին», «Խերեսն» ու «Խվանձկարան»)։

գ) որ միայն քիմիական տերմինների թիվն անցնում է 300.000-ից. որպիսի բառաքանակ երեւի չունի աշխարհի և ոչ մի լեզու. ուստի և քիմիկոսները հազարավոր նյութերի վերագրում են կամ պայմանական «անիմաստ անվանումներ», ինչպես, օրինակ՝ $X_{17}H_{19}M_3A_3T_2ЮБР$ (մի առանձին տեսակի պողպատի մականիշ է), կամ էլ նյութը անվանում են նրա ամբողջ բանաձևը ներկայացնող բառ-անվանումով, ինչպես, օրինակ՝ *тиаминацетаминдинплатотетрахлороплатеат. этилендиамеметиламиннатродихлорплатохлорид, метаноксидэтилендиамидофенилдитолилкарбинолдиэульффоническая кислота*⁴:

Ի՞նչ կարելի է անել այսպիսի տերմինների հետ, սրանց հայատառ զբոսթյունից բացի, իսկ հազարավոր անթարգմանելի տերմին-հապավումնե՞րը, ինչպես՝ АКСРГБ, ЛВКСХИИ և այլն: Այսպես կարելի է շարունակել անթարգմանելի ծածկագիր-տերմինների ու բանաձև-տերմինների շարքը: Այս կարգի թարգմանական դժվարություններին եթե ավելացնենք նաև այն, որ աշխարհի բազմաթիվ լեզուներ (չինարեն, վիետնամերեն, արաբերեն, էստոներեն և այլն) իրենց կառուցվածքի ու ժառանգած լեզվական ավանգույթների պատճառով համարյա օտարաբանություններ չեն հանդուրժում, ապա պարզ կլինի, թե ինչպիսի լուրջ դժվարություններ են կանգնած ազգային լեզուների առջև գիտական տերմինաբանությունների հարցերը լուծելու ասպարեզում:

Ճրանսիացի լեզվաբան Ա. Մեյեն վաղուց է նկատել մարդկային քաղաքակրթության միասնականացման, ընդհանրացման և լեզուների անընդհատ բազմացման պրոցեսների խորը հակասությունը և այս կապակցությամբ գրել է. «Միայն Եվրոպայի քաղաքակրթությանը հետեւելու համար քսան լեզուների իմացությունը դեռևս քիչ է»⁵:

Գիտության ու տեխնիկայի զարգացման ճանապարհին բազմալեզվության հարուցած դժվարությունների գիտակցումը կար դեռևս մեր թվականությունից առաջ, և գիտնականները վաղուց են փայփայում գոնե գիտության մեջ համաշխարհային միասնական լեզու ստեղծելու գաղափարը: Այսօր աշխարհով մեկ ծավալվող տնտեսական, առևտրական ու մշակութային կապերի պայմաններում այդ խնդիրը միայն գիտության խնդիր չէ, նրանով պայմանավորվում է մարդկային հասարակության ապագա ողջ գործունեությունը:

Բանն այն է, որ միասնական լեզվի ու տերմինաբանության հարցերը չեն լուծված ոչ միայն միջազգային, այլև ներազգային մասշտաբներով: 1951 թ. տվյալներով շնդկաստանում խոսում են 700-ից ավելի լեզուներով ու բարբառներով, ընդ որում, լեզուներից ավելի քան 30-ը ունեն իրենց սեփական գիրն ու գրականությունը: Միալեզվություն ստեղծելու կառավարական փորձերը, հանդիպելով կատաղի գիմադրության, ապարդյուն են անցնում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ուժակոծիչների պահեստամասերի պակասը լրացնելու կապակցությամբ կատարված ստուգումներից պարզվել է, որ մատակարարող ֆիրմաները տափօղակը արտադրում են 57 տարբեր անուններով: Այսպիսի «տերմինային վթարները» միլիոններ կարող են արժենալ: Մեքենայի նույն մասը կարող ես գնել 57 անուններով, որպես տարբեր մասեր:

⁴ Տե՛ս Э. Свадост. Как возникнет всеобщий язык?, 1968, էջ 42:

⁵ Նույն տեղում, էջ 30:

Բայց չկարծեք, թե անգլերենն այնքան շատ շօտաբանություններ ունի, որ կարող է մերենայի մի մասին 57 անուն գնել, թեև նույն գիտական հասկացությունը ոչ միայն հիսուն, այլև երկրորդ անվամբ կոչելն էլ լեզվական թերություն է: Այստեղ էլ էջմարտությունն այն է, որ աշխարհի ամենադարգացած լեզուներն անգամ իրենց բառային միջոցներով այսօր չեն բավարարում գիտական տերմինաբանության պահանջները: Բառերի բազմիմաստությունը բնորոշ է բոլոր լեզուներին: Մենք միշտ քիչ թվով բառերով շատ հասկացություններ ենք արտահայտում. մի բան, որ հակասում է գիտական տերմինաբանության սկզբունքներին: Տերմինը բազմիմաստ չպետք է լինի: Բայց միայն Սովետական Միության արտադրանքի տարբեր տեսակները 10—15 միլիոնի են հասնում: Դե եկ ու անվանի դրանք այնպես, որ յուրաքանչյուր տերմին լինի հակերժ, ունենա իր սեփական իմաստն ու լինի ճշգրիտ, ապա չխախտի ազգային լեզվի համակարգայնությունը՝ այն դեպքում, երբ մի քանի տասնյակ լեզուներ միասին վերցրած 10—15 միլիոն բառ չունեն:

Մարդու առաջընթացը կանգ առնել չի կարող: Գիտությունն ու գիտական տերմինաբանությունը առաջադրում են իրենց տեսական սկզբունքներն ու պահանջները, իսկ ազգերն ու ազգային լեզուները լեզվական պրոբլեմները լուծում են յուրովի: Մենք իրավացիորեն խոսում ու գրում ենք տերմինաբանության սկզբունքների, օտար անհասկանալի տերմիններ գործածելուց խուսափելու, ամեն գիտական հասկացություն մեկ անվամբ կոչելու մասին, բայց իրականում Մասիս կամ Արարատ ենք ասում ու դրա տակ էլ ինչ ասես, որ չենք հասկանում՝ էլ լեռ ու մարդ, էլ շրջան ու քաղաք, էլ գյուղ ու կայարան, էլ մարզական միություն ու թիմ, էլ գործարան ու խանութ, էլ խմիչք ու սննդամթերք, էլ ծխախոտ ու դարդարանք, էլ կոշիկ ու կոշիկի արտադրության միավորում, էլ հուշանվեր ու կրծքանշան, և այս ամենը պարտադրում ենք ոչ միայն հայերենին, այլև բոլոր այն ժողովուրդների լեզուներին, որոնք տնտեսական ու մշակութային կապերի մեջ են մեր հանրապետության հետ:

Այստեղիցս, գիտական հասկացությունների հիմնական մասի տերմինավորման մեջ, ինչպես մյուս լեզուներում, այնպես էլ հայերենում չի կարելի չկիրառել տերմինաշինության տեսական սկզբունքները, եթե չենք ուզում կարվել գիտության զարգացման միջաղղալին ընթացքից:

Գիտության միջաղղալին լեզվի ստեղծումը համարելով հեռավոր ապագայի խնդիր՝ գիտնականներն ու տերմինաբանները առաջժամ անհրաժեշտ ու իրագործելի են համարում ազգային լեզուների ներսում գիտական տերմինաբանության միօրինակացումը կամ միջաղղայնացումը: Տերմինների, այսպես կոչված, միջաղղայնացման պրոցեսը ազգային լեզուներում կարող է ընթանալ երկու աստիճաններով՝ տերմինների միօրինակացումը բովանդակությամբ և տերմինների միօրինակացում և՛ բովանդակությամբ, և՛ ձևով:

Այլալեզու տերմինների ձևական ընդհանրացումը կամ միօրինակացումը լայն չափերով անիրագործելի է բազմաթիվ պատճառներով: Այդ պատճառների թվարկումն անգամ ավելորդ է, քանի որ նման երևույթը հակասում է լեզվի, որպես մտածողության և հաղորդակցման ազգային ձևի, էությունը: Գիտական տերմինաբանությունը անջատելի ու հակադրելի ազգային լեզվի բուն բառապաշարին և նույն լեզվի ներսում հնարավոր համարել ձևով ազգային և ձևով միջաղղալին բառաշարների գոյությունն նշանակում է մի կողմից իրար հակադրել լեզվի սովորական բառերն ու տերմինները, որպիսի հակադրություն գոյություն

չունի, իսկ մյուս կողմից՝ գիտական տերմինաբանությունը դուրս դնել ազգային լեզվի ոլորտներից՝ այն դարձնելով գիտություն զբաղվող անհատների մեկնաշնորհ միայն: Իզուր չէ, որ իր «Թուսաց լեզուն մաքրելու մասին» հոդվածում Վ. Ի. Լենինը զարույթով նկատում է, որ օտար բառերի անհարկի գործածությունը լեզուն դարձնում է անհասկանալի և կարող է հասցնել մասսաների վրա ունեցած մեր գաղափարական ազդեցության թուլացմանը⁶:

Քննվող հարցի այս կողմը շատ ճիշտ է մեկնաբանում է. Սվադոստը՝ գրելով, թե «Այլալեզու տերմինների ձևական միօրինականացումը երբեք չի կարող դառնալ բացարձակ, այսինքն հանգեցնել ազգային լեզուների տերմինների լրիվ համապատասխանության՝ արտասանությամբ և դրությամբ, ինչպես և չի կարող դառնալ համաշխարհային և ընդգրկել բոլոր ազգային լեզուները. քանի որ նրանցից շատերը, ինչպես, օրինակ, չինարենը, ավրոպական լեզուներից տերմիններ փոխ չեն առնում, այլ ստեղծում են դրանք ամբողջությամբ սեփական լեզվական նյութից»⁷:

Իսկ եթե մյուս լեզուները հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տերմինների փոխառություն են կատարում, այդ նույնպես միջազգային տերմինաշինություն չէ, քանի որ այդպիսի փոխառությունները ընդհանուր կարող են լինել մի քանի լեզուների համար միայն, այն էլ ձևական որոշակի տարբերություններով և ոչ բացարձակ նույնությամբ: «Միջազգային» տերմիններով զինված հայ կամ ռուս զբոսաշրջիկը իզուր պիտի ջանա Ֆրանսիայի ճանապարհների վրա իր մեքենայի համար Բենզին խնդրել, հենց այս տերմինով, երբ Ֆրանսիացիները բենզինին essence են ասում: Նրա գործը ավելի բարեհաջող չի լինի նաև Անգլիայում ու Ամերիկայում, որոնց բնակչությունը խոսելով միևնույն անգլերենով՝ բենզինն անվանում է բոլորովին այլ բառերով՝ petrol, gasolene: Մարդկության բոլոր կարգի համաշխարհային ծավալի մերձեցումները հանգեցնում են գիտական տերմինների միօրինակացման ու ընդհանրացման՝ ըստ բովանդակության:

Գնալով ավելանում է չափի ու կշռի կայունացման, արտադրանքների տեսակավորման ու նորմավորման, գիտական հասկացությունների համաշխարհային ճանաչման միատեսակ սահմանումների գծով զբաղվող հանձնաժողովների, կոմիտեների, գիտական մարմինների թիվը:

Գիտության առաջընթացից հետ շմնալու, ազգային սահմանափակ չզառնալու համար տարբեր ազգեր ու ազգային գիտնականներ ոչ թե վիճում են այս կամ այն հասկացությունը ազգային, թե «միջազգային» բառով անվանելու մասին, այլ խորհրդակցում ու վիճում են այդ հասկացության ու նրա սահմանման մասին: Կարևորը ոչ թե նյութ կամ մատերիալ անվանումն է, այլ այն, թե ինչպես ենք սահմանում այդ անվանումը: Գիտնականները չեն վիճում լույսը, որպես ֆիզիկայի տերմին, բոլոր լեզուներում մի միասնական անվանմբ կոչելու մասին, գա առայժմ անհնար բան է, այլ վիճում են, թե լույսը մարդու տեսողական օրգանի զգայական առանձնատկությունն է, թե՝ նրանից դուրս գտնվող նյութի ճառագայթման, իրենից նյութական մանր մարմիններ անջատելու առանձնատկությունը:

⁶ Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 375:

⁷ Э. Свадост, Как возникает всеобщий язык?, էջ 46: